

Հայաստան Ծառատունկ Ծրագիրը, «350»-ի միջազգային օրվա շրջանակներում, Հոկտեմբերի 24-ին նախաձեռնեց երիտասարդական միջոցառում ուղղված կլիմայի փոփոխությանը

Հայաստան Ծառատունկ Ծրագիրը, ներգրավված լինելով գլոբալ «350» կլիմայի փոփոխության քարոզարշավին, Համագործակցում է «Իմաստասեր Հայորդի» և «Գյուղատնտեսության Զարգացման Ծրագրի» | Էյ- Դի- Փի| ՀԿ-ի Հետ և նախաձեռնում է տնկել սոճու 350 տնկի Լոռվա մարզի Զրաշեն գյուղում:

«Մենք կազմեցինք 40 աշակերտներից բաղկացած մի խումբ, որը ներկայացնում է Հինգ միջնակարգ դպրոցներ: Բոլորն էլ Հանդիսանում են իրենց դպրոցների Էկո-խմբերի անդամներ: Խմբում ընդգրկված էին նաև ուսուցիչներ, մեր և մեզ Հետ Համագործակցող կազմակերպությունների աշխատակազմը, որոնք ղեկավարեցին այս նախաձեռնությունը», նշեց «Էյ-Թի-Փի» Բարեգործական Հիմնադրամի տնօրեն ՄՀեր Սադոյանը: «Միջոցառման մասնակիցները տնկեցին սոճու 350 տնկի «Էյ-Թի-Փի»-ի նորաստեղծ անտառներից մեկի լանջերին:»

«Մենք Հպարտ ենք ներկայացնելու Հայաստանը այս միջազգային 350 շարժման շրջանակներում և բարձրացնելու իրազեկությունը կլիմայի փոփոխության Հիմնահարցի վերաբերյալ: Այս քարոզարշավի նախաձեռնողները բնապահպան-ակտիվիստներն ու գիտնականներն են եղել, որոնց նպատակն էր Հասարակությանը իրազեկել ածխաթթու գազի աճի Հսկայական ծավալների մասին, որը ընդհանուր առմամբ առաջացնում է կլիմայի փոփոխություն և նույնիսկ Հայաստանում, որտեղ մենք ականատես ենք լինում եղանակի ծայրահեղ դրսևորումներին և առավել չորային եղանակի, որոնք իրենց Հերթին Հետք են թողնում ինչպես անտառների, այնպես էլ գյուղատնտեսության վրա», պարզաբանեց Սադոյանը:

«Այս օրը ամբողջ աշխարհում բնապահպան-ակտիվիստները միջոցառումներ են ձեռնարկում աշխարհի առաջավոր երկրների առաջնորդներին իրազեկելու, որ գիտնականները եկել են այն եզրահանգման, որ մթնոլորտում ածխաթթու գազի ավելցուկը պետք է նվազեցվի մինչև մեկ միլիոնից 350 չափաբաժնի սահմանը, Հակառակ դեպքում մեր առջև կծառանան կլիմայի այնպիսի փոփոխություններ, որոնք իրենց Հերթին կհանգեցնեն լայնածավալ արհավիրքների թե՛ մարդկանց և թե՛ էկոհամակարգերի Համար», ավելացրեց Սադոյանը:

Հայաստանը ներկայացված էր Հայաստան Ծառատունկ Ծրագրի («Էյ-Թի-Փի»), «Իմաստասեր Հայորդի» և «Գյուղատնտեսության Զարգացման Ծրագիր» | Էյ- Դի- Փի| ՀԿ-ի կողմից, որոնք միշտ ակտիվություն են ցուցաբերել բնապահպանական, կրթական և գյուղատնտեսական բնագավառներում: ՄԱԶԾ-ը նույնպես իր օժանդակությունը ցուցաբերեց այս նախաձեռնությանը իր «Կլիմայի փոփոխության Հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնանտառային էկոհամակարգերի Հարմարվողականության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ներկա էին նաև կամավորներ «Դեպի Հայք» (Birthright Armenia) կազմակերպությունից, որոնք աշակերտների Հետ միասին մասնակցեցին ծառատունկին:

«Մենք խոսում ենք կլիմայի փոփոխությունից, բայց ցավոք ոչինչ չի արվում դրա դեմ պայքարելու Համար: Մենք շնորհակալ ենք Հայաստան Ծառատունկ Ծրագրին այս Հրաշալի նախաձեռնության Համար: Այսօր ես ուրախ եմ, երբ տեսնում եմ, թե ինչ

ոգևորությամբ են աշակերտները ծառ տնկում», նշեց կենսաբանության ուսուցչուհի Նվարդ Գևորգյանը:

«Սա մի հաճելի միջոցառում է աշակերտների համար և այն ունի կրթական նշանակություն: Իմ աշակերտները այնքան ուրախ են, որ մասն են կազմում այս կարևոր «350» նախաձեռնությանը և ներկայացնում են մեր երկիրը կլիմայի փոփոխությանը ուղղված այս համաշխարհային շարժման շրջանակներում», ավելացրեց տիկին Գևորգյանը: «Ես հույս ունեմ, որ ապագայում ևս կմասնակցենք բնապահպանական այլ միջոցառումներին:»

«Ծառերը կլանում են ածխաթթու գազ, որը առաջացնում է փոփոխություն կլիմայում: Այսօրվ, մենք հույս ունենք, որ համաշխարհային 350 քարոզարշավը դրական ներդրում կունենա և կօգնի նվազեցնելու կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցությունը մասնավորապես Հայաստանի գյուղական համայնքներում և այն երկրներում, որոնք ամենից շատն են դրանից տուժել», նշեց «Էյ-Թի-Փի»-ի Բնապահպանական կրթության բաժնի ղեկավար Ալլա Բերբերյանը:

«Կլիմայի փոփոխության դեմ ուղղված գործընթացը դրական միջոցառում է, որը ինչպես հայ, այնպես էլ միջազգային հանրության մոտ կրնդգծի 350 թվի կարևորությունը, և մենք ակնկալում ենք, որ այն կունենա գործնական կրթական նշանակություն հատկապես գյուղի դպրոցում և ուսուցիչների շրջանակում», նշեց Բերբերյանը: «Մենք հպարտ ենք, որ Հայաստանը միացել է այս միջազգային շարժմանը և ակնկալում ենք 350.org կայքում հանդիպել նմանատիպ նախաձեռնությունների, որոնք կանցկացվեն այլ երկրներում»:

«Սա իմ տնկած առաջին ծառն է, և ես այժմ հրաշալի եմ ինձ գգում», անմիջապես միջոցառումից հետո հայտարարեց տասներորդ դասարանցի մի աշակերտուհի: «Ես գիտեմ, որ այսօր կլիմայի փոփոխությանը ուղղված պայքարի միջազգային օրն է: Աշխարհը համախմբվել է մեկ ընդհանուր գաղափարի շուրջ՝ նվազեցնել ածխաթթու գազի մակարդակը միջավայրում և այն հասցնել 350-ի մակարդակին: Ես համոզված եմ մենք կհաջողենք, քանի որ դա բոլորիս նպատակն է:»

«Այս արևաշող օրը մենք ծառատունկ ենք անում Լոռվա մարզում: Սա թե՛ հաճույք է, թե՛ անհրաժեշտություն», նշեց մեկ այլ տասներորդ դասարանցի: «Ծառերը ածխաթթու գազ են կլանում, ուստի մենք պետք է շատ ծառ տնկենք: Որախ եմ, որ մասնակցում եմ այս նախաձեռնությանը: Ոգեշնչող է այն միտքը, որ ամբողջ աշխարհում միաժամանակ նմանատիպ միջոցառումներ են տեղի ունենում, և մենք նույնպես մեր ներդրումն ունենք»:

Սկսած 1994 թվականից, Հայաստան Ծառատունկ Ծրագիրը ավելի քան երեք միլիոն ծառ է տնկել մեր երկրի 800-ից ավելի վայրերում, և հարյուրավոր աշխատատեղեր են ստեղծվել հայ ազգի աղքատացած հատվածի համար սեզոնային ծառատնկման աշխատանքների շրջանակներում: Կազմակերպության երեք կարևորագույն նպատակներն են՝ ծառատունկը, համայնքի զարգացումը, որը կկրճատի աղքատությունը և կխթանի ինքնաբավությունը և բնապահպանական կրթությունը՝ Հայաստանի թանկարժեք բնական ռեսուրսները պահպանելու համար: